«Հաստատում եմ»

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական

միջազգային

կենտրոնի տնօրեն

Ա. Սարգսյան

---

17. մայիսի 2021 թ.

Կարծիք

Լիլիթ Խաչատուրի Սարգսյանի «Հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկություններն անձի Ես-ի կառուցվածքում»

ԺԹ.00.01 -«Հոգեբանության տեսություն և պատմություն»

մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Մարդկային զարգացման ներկա փուլում, երբ առկա է համաշխարհային հանրության գլոբալիզացիոն և ինտեգրացիոն ողջ աշխարհի մակարդակով ընթացող սոցիալական, տնտեսական, աշխարհաքաղաքական տարաբնույթ գործընթացներ, ռեգիոնալ կոնֆլիկտներ և պատերազմներ, հանրության առջև ծառանում են սոցիալ-հոգեբանական բազմաբովանդակ հիմնահարցեր՝ օրախնդիր դառնալով հարմարման ու կենսունակության ապահովման հոգեբանական առաջնահերթությունների համար:

Այդպիսի իրավիճակում հրատապ է դառնում ստեղծված իրադրության բացասական պոտենցիալի մարումը, սթրեսների ու ֆրուստրացիաների

մեղմացումն ու հաղթահարման նորանոր մեխանիզմների մշակումը, վերարժևորումն ու կիրարկման անհրաժեշտությունը:

Անհերքելի է այն փաստը, որ դեռևս անցած դարի 90-ական թվականների սկզբին տեղի ունեցած Արցախյան պատերազմում մարդկային կորուստներ ունեցող անձինք մինչ օրս իրենց մեջ կրում են դրանց հետևանքով ձևավորված հետվնասվածքային սթրեսային խանգարումների կայուն ֆոն: Բնականաբար, հարազատի, և առհասարակ, մարդու կորուստը մարդկային, բարոյական, նյութական կապերի ու դրանցով պայմանավորված կյանքի իմաստի, անձնական երջանկության ու հեռանկարի կտրուկ արժեզրկման, էկզիստենցիոնալ դատարկության և վակումի հիմք է: Այս համատեքստում առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն պատերազմում զոհված հարազատներ ունեցող անձանց, որոնք ինչ-որ ձևով համոզվել ու հաշտվել են կորստի հետ՝ անհայտ կորածների հարազատները գիշեր ու զօր հույսով ու կարոտով սպասում են իրենց զինվորին: Անհայտ կորածների հարազատների հոգեֆիզիոլոգիական համակարգում առաջանում են նորագոյացություններ, որոնց բազմաշերտ ուսումնասիրությունը լույս կսփռի այս հույժ կարևոր հիմնախնդիրների բացահայտման վրա:

Ներկայացված հիմնախնդիրն, իր ամբողջական դրսևորումներով, դեռևս կարոտ է լիարժեք լուսաբանման ու առանձին խնդիրների նորովի մեկնաբանման: Մասնավորապես, մասնագիտական հույժ կարևորություն է ներկայացնում վնասվածք կրող մարդկանց համար վերականգնողական և հոգեկան առողջության պահպանման հոգեբանական ուղեկցման համապատասխան համակարգերի մշակումը, անձի «ես» կառուցվածքի ձևափոխությունների հոգեֆիզիոլոգիական մեխանիզմների, անհատական առանձնահատկությունների, կոգնիտիվ, հուզակամային, զգայաշարժական համակարգերի գործառնական փոփոխությունների խնդիրները:

Ատենախոսն իր հետազոտության ընթացքում հենվել է ֆունդամենտալ մեթոդաբանական հենքի վրա՝ (Հ. Սելյեի կենսաբանական սթրեսի տեսության հիմնարար դրույթները, Ռ. Ս. Լազարուսի հոգեբանական սթրեսի առաջացման

պատճառական համակարգերի ուսումնասիրությունները, Ի.Գ.Մալկինա-Պիխի հետվնասվածքային սթրեսի տեսության հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների ժամանակագրական փուլերում դրսևորվող տեղաշարժերի տեսակետները, Պ.Վ. Սիմոնովի հույզերի ծագման և դրսևորման ինֆորմացիոն տեսության հիմնարար գաղափարները, Մ.Պ. Մկրտումյանի արտակարգ իրավիճակների հոգեբանության հիմնարար գաղափարները և այլն)՝ հետազոտական աշխատանքները կառուցելով անձի ամբողջականության և համակարգայնության սկզբունքների հաշվառմամբ:

Երևույթների հոգեֆիոլոգիական տեղաշարժերի վերլուծությունն ու դրանց հիմնավորումներն իրականացվել են պատճառականության գիտական սկզբունքների հիման վրա:

Նպատակադրվելով ուսումնասիրել Արցախյան պատերազմում անհայտ կորած անձանց և զոհվածների հարազատների հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկությունները, ինչպես նաև անձի «ես» կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունների յուրահատկությունները, ատենախոսը հետազոտողի նրբանկատությամբ հետևողականորեն իրագործել է առաջադրված խնդիրները՝ քայլ առ քայլ հագեցնելով նպատակադրման բովանդակությունը:

Ատենախոսության մեջ՝ հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկությունների համատեքստում, նորովի է ներկայացված վարկածի գաղափարական հենքը: Վերջինս նոր կանխադրույթ է, նոր մոտեցում հիմնախնդրին առ այն, որ պատերազմում անհայտ կորածների ընտանիքների անդամների հետվնասվածքային սթրեսային խանգարումներն անձի կոգնիտիվ գործընթացների և հուզական ոլորտի միջև ֆունկցիոնալ կապերի համագործակցության առանձնահատուկ դրսևորումներ են՝ հանգեցնելով անձի խորքային կառույցների գործառնական փոփոխության: Այդպիսի տեղաշարժերը ժամանակի ընթացքում միտված են դառնում անձի «ես» կառուցվածքի ձևափոխումներին: Վերջիններս արտահայտվում են անձնային առանձնահատկությունների ձևափոխումներով, անձի հուզական ոլորտի ինքնակառավարման, ինքնակարգավորման հնարավորությունների անկմամբ:

Իրականացված հետազոտությունն իր ձևով ու բովանդակությամբ լիովին համապատասխանում է հոգեբանության բնագավառում գիտական հետազոտություններին ներկայացվող պահանջներին: Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունն ապահովված են հետազոտության մեթոդաբանական հիմքերով:

Հետազոտության արդյունքների մշակումներն ու հաշվարկներն իրականացվել են տվյալների մշակման մաթեմատիկական վիճակագրական համարժեք մեթոդների ընդգրկմամբ, ըստ խմբերի, տվյալների որակական և քանակական վերլուծությամբ: Հետազոտությունն իրականացվել է հուսալիության և վալիդության բարձր աստիճան ունեցող մեթոդիկաների համակարգված կիրառմամբ՝ բացասական գործոնների ազդեցության առանձնահատկությունների հարցաթերթիկ, Զ.Դ. Սպիլբերգերի, Յու.Լ. Խանինի «տագնապայության մակարդակի ախտորոշման» մեթոդ, Ռ.Բ. Կետելի «16 գործոնային անձնային հարցարան» (C տարբերակ) Մ.Ջ.Հորովիցի, Ն. Վիլների «Վնասվածքային դեպքի ազդեցության գնահատման սանդղակ», Շ. Շվարցի «Արժեքային համակարգության հարցաթերթիկ» մեթոդ, Ե.Պ. Իլյինի (Տեպպինգ թեստ) «Զգայաշարժական հատկությունների էքսպրես ախտորոշման մեթոդիկա», հոգեմկանային վերականգնողական մեթոդներ (Մ.Պ.Մկրտումյանի տարբերակ):

Ատենախոսի կողմից հետազոտությունների կազմակերպման ռազմավարությունն ու աշխատանքի ողջ ընթացքը կառուցվել է հետազոտվող անձանց վնասվածքային եղելության հետ նրանց առնչության, անհատական, սեռային, տարիքային առանձնահատկությունների, սոցիալական դիրքի, ապրումների բազմազանության և այլ կարևոր բնութագրերի հաշվառմամբ, երկփուլային, 90-ական թթ. Արցախյան հերոսամարտում անհայտ կորածների և զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամների մասնակցությամբ:

Ըստ էության, ներկայացված ատենախոսությունն իր գիտական վարկածով, առաջադրած դրույթներով, կիրառված մեթոդաբանությամբ և եզրահանգումներով այսօրեական խիստ կարևոր ու հրատապ հիմնախնդրի

նորովի մեկնաբանում է հոգեբանական գիտակարգում, ինչը բնորոշվում է թե՛ տեսական և թե՛ կիրառական նշանակությամբ:

Բարձր է գնահատվում ատենախոսության գիտական նորույթը: Այն արտահայտվում է «անհայտ կորած» և «կորուստներ» ունեցողների «ես» կառուցվածքում սթրեսի ազդեցության առանձնահատկությունների ու յուրատիպության, օրգանիզմի, և հոգեկան համակարգության հիմնական փոփոխություններն արտացոլող կառուցվածքային բաղադրամասերի փոխհամագործակցության շեղումների և դրանց յուրահատկությունների բացահայտմամբ: Նոր լույս է սփռված նյարդային համակարգի ֆունկցիոնալ փոփոխություններին բնորոշ բացասական տեղաշարժերի, հետվնասվածքային սթրեսային խանգարումների ձևավորման անձնային առանձնահատկությունների իմաստավորման վրա, և որպես նոր մոտեցում հանդես է գալիս հիմնախնդրի դիտարկումը՝ անձի հուզական վիճակների, մոտիվացիոն և արժեհամակարգային փոփոխությունների առանձնահատկությունների համահարաբերակցության համատեքստում:

Ատենախոսության մեջ արժևորվում է նաև այն, որ հաշվի առնելով հետազոտության ընթացքում իրականացված բացահայտումներն ու արդյունքները, հեղինակի կողմից մշակվել են հետազոտության մեթոդների և հետազոտական աշխատանքների իրականացման համակարգ և արդյունավետության ապահովման ռազմավարություն: Այն, անշուշտ, հնարավորություն կընձեռի կիրառել և իրականացնել համապատասխան համակազմի և հետվնասվածքային երևույթների հետազոտման և ուղեկցման գործընթացն ու հոգեբանական աջակցության, ուղեկցման աշխատանքներն իրականացնելիս կարճ ժամանակամիջոցում արդյունավետորեն կազմակերպել ընդհանուր և հոգեկան առողջության բացասական փոփոխությունների վերականգնման գործընթացները:

Այդուհանդերձ, ներկայացված ատենախության մեջ առկա են որոշ դիտարկումներ, որոնք ատենախոսի կողմից մեկնաբանման կարիք ունեն:

Մասնավորապես՝

1. Հետազոտության մեթոդների մարտկոցում կիրառվել է <<Տեպինգ տեստ-մեթոդ>>-ի գրաֆիկական տարբերակը: Այս համատեքստում առկա է կոնկրետ գրաֆիկական տարբերակի կիրառման նպատակահարմարության հիմնավորում և վերջինիս կիրառման արդյունքում հանգուցալուծող խնդիրների մանրամասնություն:

2. Հայտնի է, որ երկարատև հոգեվնասվածքային վիճակները ձևավորում են անձի յուրահատուկ հոգեմարմնային փոփոխություններ: Ցանկալի կլիներ, որ ատենախոսության մեջ ապահովված լիներ տարիքային տարբեր խմբերում այդ յուրահատուկ հոգեմարմնային փոփոխությունների առկայության և արտահայտվածության առավել հստակ և մանրամասն ներկայացվածություն:

3. Առավել հստակեցնելու կարիք է զգացվում կյանքի նկատմամբ լավատեսական վերաբերմունքի ձևավորման փուլայնությունը և մեթոդիկաները, որոնց օգնությամբ կտրուկ փոխվում են անձի վնասվածքային եղելության նկատմամբ ունեցած վերաբերմունքը, պարպվում ժամանակի ընթացքում կուտակված, չպարպված հույզերի մնացորդային ապրումները:

Եզրակացություն

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Լիլիթ Խաչատուրի Սարգսյանի «Հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկություններն անձի Ես-ի կառուցվածքում» ԺԹ.00.01- «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն, գիտական վերլուծությամբ և առաջադրված հիմնախնդրին նորովի մոտեցմամբ աշխատանք է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-

րդ կետի պահանջներին և ԲՈՀ-ի կողմից՝ ԺԹ 00.01 «ԺԹ 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման պահանջներին:

Աշխատանքի վերաբերյալ կարծիքն ու եզրակացությունները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության ամբիոնի 2021 թվականի մայիսի 17 հմ. 21/5 նիստում:

Քննարկմանը մասնակցում էին ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նաիրա Հակոբյանը, հոգեբանական գիտությունների դոկտոր Ռուբեն Նաղդյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վազգեն Պողոսյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Աննա Խաչատրյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Հարությունյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիամ Մեհրաբյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Մարիա Թևոսյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Արմինե Մուրադյանը:

Ամբիոնի վարիչ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ն. Հակոբյան

Ամբիոնի վարիչ Ն. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտքարտուղար Մ. Սարգսյան